ՆՈՐ-ԴԱՐ

№ 200 ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 20 Նոյեմբերի | 1887 | Ուրբաթ 20 Նոյեմբերի ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 200

Տարեկան 10 րուբլի, վեց ամսոյ՝ 6 րուբլի, երեք ամսոյ՝ 3 ր. 50 կ., ամսոյ՝ 1 ր. 50 կ., հատով՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում՝ են Թիֆլիսում՝ միայն խմբագրատունը։

Խմբագրութիւն հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի մօտ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լուսնեւորով։
Յայտարարութիւնների գնաւն 2 կ., երկրորդների համար կէս-գնով։

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ
Թ Ի Ֆ Լ Ի Ս Ո Ւ Մ

ԱՌԱՋԻԿԱՅ **1888** ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Հինգերորդ տարի)

Կը հրապարակուի նոյն չէջերով և ծրագրով

Խմբագրութիւնը կը ստանայ և սեպհական հեռագիրներ

Տարեկան գինն է **10** րուբլի, վեց ամսուան՝ **6** րուբլի, հատով՝ **5** կոպ.

Եւրոպայի, Թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Բաժանորդ են գրվում իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Թիֆլիսում բաժանորդ են գրվում Ղ. Ղոյան՝ «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնվում է Գօլովինսկի Պրօսպեկտի վերայ, Թիֆլիսի ժողովարանին (կլուբին) կից՝ Զուբալովի տանը։

Օտար քաղաքներից գիմում են խմբագրութիւան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ПОДПИСКА и ОБЪЯВЛЕНІЯ ежедневной армянской газеты «НОРЪ-ДАРЪ» принимаются **исключительно** въ конторѣ редакціи: Головинскій просп., домъ Зубалова, возлѣ помѣщенія Тифлисскаго Сборанія.

Иногородные адресуютъ свои требованія: **ТИФЛИСЪ, ВЪ РЕДАКЦІЮ «НОРЪ-ДАРЪ»**.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն. — Լուրեր։ Նչմարներ. Գիտական-գրականական աշխարհի սահմանից։
Քաղաքական. — Լուրեր։

Խառն—Լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
Յայտարարութիւններ։
Բանասիրական. — Քնքոյշ լաւրեր. Վէպ. (շարուն.)։

ՔՐՈՆԻԿՈՆ

Նոյեմ. 18 ին, ինչպէս յայտարարած էինք, թատրոնասէրների մի խումբ խաղացին պ. Քիչմիչեանի «Աչքից ընկած—մարդից հանած» մի նոր պիեսան առաջին անգամ Հայկազեան Բարեգործական Ընկերութեան օգտին։

Դէպի թատրոնասէրների առաջ ներկայացումը չենք կարող և իրաւունք չունինք խստութեամբ վերաբերուելու։ Դրանք զերասաններ չեն, հետևաբար րեցէնզիա գրել և գրանց խաղի թերութիւնները քննել չենք կարող։ Կարող ենք ասել, որ բաւականին լաւ խաղացին թատրոնասէրները։ Ամենից աւելի լաւ և մտածելով կատարեց իր սարքրն առած մօր գերը՝ սիկին Եւանդուլեանը. ինչ որ կարող էր իր խեղճ դերից դուրս բերել՝ սիկինը բերեխղճութեամբ դուրս բերից։ Պէտք է ասել, որ այդ նոր պիեսայի մէջ համարեա բոլոր դերերն էլ խեղճ են։ Տ. Քալանթարեանը պճնասէր սիկնոջ գերը կատարեց այնքան, որքան հեղինակը թոյլ էր տուել նրան բեմի վերայ երևալու։

Պ. պ. թատրոնասէրները իրրև թատրոնասէրներ լաւ էին. գովելին այն էր, որ ոչ ոք չիչցայրից իր գերը, ամենքն էլ իրենց գերերը լաւ սերտել էին։

Կօմիդիայի, նրա բովանդակութեան և բեմական արժանաւորութեան մասին մի երկու խօսք կասենք վաղուայ համարում։ Այժմ այսքանը կասենք, որ ներկայացումը սչինչ տպաւորութիւն չթողեց մեզ վերայ։

«Վայ քի իմ վէյեր «Քարսը քիչ չատ կենդանութիւն տուաւ բեմին։ Տիկին Քալանթարեանն էլ լաւ էր, ինչը պ. Քիչմիչեանն էլ լաւ գրեմով էր և ա-

ջողութեամբ խաղում էր. ափսոս միայն, որ ձայնը կտրուած էր, իսկ խալաթեանը չատ լաւ էր իրրև թատրոնասէր։

Թատրոնը լիքն էր բազմութեամբ. պարապ տեղ չկար։ Թատրոնասէրները ծախսահատութեամբ մի քանի անգամ բեմ հրաւիրուեցան. հեղինակին հրաւիրեցին բեմ և ծափահարութիւններով հասարակութիւնը նրան իր չնորհակալութիւնը յայտնեց։

—

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսին մօտիկ գտնվում է Բօլնիս գիւղը, որ իրրև ախտատեղի յայտնի է. ամեն տարի Թիֆլիսից և աւելի հեռաւոր տեղերից այնտեղ ս. Գէորգի անուան նուիրուած եկեղեցու ուխնին չատ ուխատաորներ գնում են համբուրելու։ Պէտք է ասենք, որ այդ եկեղեցու արդիւնքը յատկացրած է Ներսիսեան հոգևոր դպրանոցին և այդ պատճառով նրա ուխնին միշեալ դպրանոցի հոգաբարձութիւնը մարդ է ուղարկում, չատ անգամ հոգաբարձուներից մէկն էլ գնում է Բօլնիս, ուխնին՝ եկեղեցու արդիւնքի վերայ հսկելու և դանձելու։

Հասկանալի է, որ դպրանոցի չունն պահանջում է, որ Բօլնիս տանող ճանապարհը լաւ լինի և ուխատաորին նեղութիւններ չպատճառէ։ Բայց դժբաղդաբար այդ ճանապարհը վատ է, ճանապարհորդին ոչ մի միայն չատ նեղութիւններ է պատճառում, այլ չատ անգամ նրա կեանքն է վտանգի ենթարկում։ Քանի և քանի անգամ պատահել է, որ ճանապարհի վատութիւնից փոքրիկ չատ է եկել և ձիանները խրտնելով ուխատաորներին գետին են մկկի տան է կոտրել, միւսի գլուխը, մի երրորդի՝ ուղն ու տեղը հոգին ուտնդել է։

Այս մասին «Նոր-Դար»-ը մի քանի անգամ լուրեր է հաղորդել։ Այս տարի Բօլնիսի ուխնին, ուխատաորների թուում գտնուել է և Թիֆլիսի չատ հարուստ կնոջը, որ բոլոր սրտով կապուած էր նրա հետ, որ նրա մէջ էր գտնում իր ամուսնական երջանկութիւնն և անպատման հաւատում էր նրա հաւատարմութեանը,—նա պղում էր, որ իրենն երբէք չէր կարող իրեն ներել, եթէ նա զրանից իմացէր իր սիրուը—ամուսնական երջանիկ սիրուն այդ քաղցրատանչ աղբիւրը—և ընծայ բնէր մի ուրիշ, օտար կնոջ։ Եւ ինչու հաւատարիմ չլինել կնոջն, երբ կինը նրան հաւատարիմ է։ Ինչու քակտել ամուսնական ամենասուրբ, նուիրական պայմանները, երբ նա երբէք իրաւունք չունի այդ անելու և, բացի զրանից, երբ այդ քակտման հետևանքը բարոյական սոսկալի տանջանք է։ Աստուծոյ սուրբ տաճարի մէջ բազմաթիւ վկաների առաջ, հրապարակօրէն նա ուխատել էր հաւատարիմ մնալու իր կնոջը մինչև մահու գերեզման և միայն և եթէ այդ սրբազան ուխտն անբիծ պահպանելու մէջ է կայանում իսկական ամուսնութեան բարոյական ամենաթաղցր երջանկութիւնը։ Նա այդ բոլորը հասկանում էր.—և ինչ մեծ սրխտ, չանցանք կը լինէր նրա կողմից, որ իր այդ սուրբ երջանկութիւնն իր կամքով մի կողմ հրէր և անձնա-

—

ԲԱԳՈՒԻՒ.—Նոյեմբերի 16-ին Գէօկչայի գաւառից նորընտիր պետարների, մօտ քսան երեք հոգի, որոնցից 19-ը հոգի են, 2 մալական, 2 հրէայ, հաւան Բագու։ Նորընտիրներին այստեղի ծխական գործարանատէր պ. Միրզաբէկեանցը գիմաւորելով, հիւրանոցից կառարանից ոչ հեռու գտնուող հիւրանոցում։

—

Քաղաքային խորհրդի մօտակայ ժողովներից մինում պիտի բարձրանայ քաղաքային ջրմուղը բէլգիական ընկերութեան յանձնելու առաջարկը։ Այդ

ՀԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՆՔՈՅՇ ԼԱՐԵՐ *)

Վ է Պ

—

Ժ.

ԱՄԱՐԱՆՈՑԻ

Ամարանոցն, ուր բնակվում էին Հարութեանները և ուր գանվում էր իշխանուհի Մելիքեանի ժառանգական դաստակերտը, չբջապատած էր անտառով, որի չնորհիւ և ամարանոցի օդն այնքան զով և առողջարար էր։ Անտառի մէջ կտրատում էին միմեանց զանազան լայն ու նեղ ճանապարհներ, ինչպէս այդպի ճմեղիքներ՝ ծածկուած անթիւ ծառերի սաղարթախիտ ճիւղերով, որոնց տակը բնաւ չէին թափանցում ամարային արևի հրատապ ճառագայթները։ Այդ ճանապարհները, որոնք տանում էին հեռուն՝ դէպի անտառի խոութիւնները, ուր և նրանք զարձեալ միանում էին միմեանց հետ,—չատկապէս չինուած էին ամարանոցի բնակիչների համար, որոնք ամեն օր դուրս էին գալիս այդտեղ զբօսանքի։

Գարուն Հարութեանը, որին փոքր ի չատէ աջողուել էր սառեցնել իր մէջ ապօրինի սիրոյ զգացմունքը, գրեթէ

ողջ օրն իր կնոջ, որդու և եղբօր հետ անց էր կացնում այդ անտառում։ Նրանք առանձնանում էին անտառի խոութեան մէջ և, նստելով կանաչ խոտերի վերայ, հովասուն ծառերի մըշտական սուսերների տակ՝ Արմենակը թերթում էր իր օրինագիրքը, մի քանի քայլ հեռու փոքրիկ Հայկանուշը խաղում էր իր դալուկ-դաստիարակչուհու հետ, իսկ պարոն Հարութեանն ու իր կինը պարապում էին ընթերցանութեամբ, կամ՝ բոլորը միասին հաւաքուելով պարապում էին քաղցր խոսակցութեամբ։ Մի տեսակ անպատմելի թեթևութիւն էր զգում Հարութեանն, երբ նայում էր իր կնոջ խնարհ, անմեղ աչքերին և գիտէր, որ իր սրտի վերայ ոչինչ չանցանք չէ ծանրացած զէպի նա, նամանաւանդ՝ որ այդ չանցանքի առիթն ակամայից ներկայանալով, նա ի բոլոր սրտէ ցանկանում էր նրանից հեռու փախչել։ Այո, թէպէտ նոր սէրը կլանել էր նրա ամուսնական սիրուն, բայց և այնպէս նրա խիղճը չէր կարող տանջել նրան, քանի որ նաչէր անձնատուր եղել այդ նոր սիրուն և երբէք էլ չէր կամենում նրան անձնատուր լինել, այլ ընդհակառակը,—կամենում էր դուրս կորզել նրան իր սրտից և նորից տեղ տալ ամուսնական անմեղաքաղցր, ամենահանգիստ սիրուն։

Փոքրիկ Հայկանուշն—իրենց այդ միակ զաւակին՝ հայր և մայր սիրում

էին ծնողական ամենաքնքուշ սիրով, գուրսով։ Ինչպէս կինը, նոյնպէս և ամուսինն այդ զաւակի մէջ տեսնում էին աչ անխոչնդոտ կապը, որ անպատմելի կերպով միացնում էր նրանց միմեանց հետ։ Այդ զաւակն էր գլխաւոր պատճառը, որ Հարութեանը ոչինչ չարութիւն չէր կամենում անենալ իշխանուհի Մելիքեանի հետ, որ նա այնպէս, գրեթէ անձնազոհութեամբ, պատերազմում էր անդադար իր մէջ բորբոքուող ապօրինի սիրոյ դէմ։ Այդ զաւակը, կարծես, մատակարարում էր նրան նոր ոյժ, նոր եռանդ չարութիւնկելու մինչև վերջն այդ բարոյական պատերազմը։ Այդ սիրուն փոքրիկ երեխայի ամեն մի թոթովանքը, մանաւանդ, երբ այդ նրա անունն էր լինում—«հայրիկ», նրան ամեն բան մոռացնել էր տալիս և, իսկոյն առնելով նրան իր հայրական գրկի մէջ, նա անդադար սեղմում էր իր կրծքին, որի տակ ցնծում էր նրա սիրտը, իրնդում էր նրա հոգին։ Նա սկսում էր համբուրել այդ հրնչականման երեխայի անմեղ, քնքուշ, փոքրիկ չրթունքները, որոնցով նա արտասանում էր «հայրիկ» երկնային, կեանք տուող բառն ամեն մի հօր, և մի տեսակ պաշտաւնեայի հնազանդով ու անխօտ նայում էր իր կնոջ քաղցր ժպտող աչքերին, կարծես, լսելով նրան իր անհուն չնորհակալութիւնն, իր բոլոր երախտապիտութեան զգացմունքը նրա պարգևած

այդ ամենաթանկագին երջանկութեան համար։ Օ՛, ինչը կարող էր մրցել ծնողական այդ երկնաւոր, նուիրական երջանկութեան հետ...

Միւս կողմից, տեսնելով իր բարի, խնամարն, հաւատարիմ կնոջը, որ բոլոր սրտով կապուած էր նրա հետ, որ նրա մէջ էր գտնում իր ամուսնական երջանկութիւնն և անպատման հաւատում էր նրա հաւատարմութեանը,—նա պղում էր, որ իրենն երբէք չէր կարող իրեն ներել, եթէ նա զրանից իմացէր իր սիրուը—ամուսնական երջանիկ սիրուն այդ քաղցրատանչ աղբիւրը—և ընծայ բներ մի ուրիշ, օտար կնոջ։ Եւ ինչու հաւատարիմ չլինել կնոջն, երբ կինը նրան հաւատարիմ է։ Ինչու քակտել ամուսնական ամենասուրբ, նուիրական պայմանները, երբ նա երբէք իրաւունք չունի այդ անելու և, բացի զրանից, երբ այդ քակտման հետևանքը բարոյական սոսկալի տանջանք է։ Աստուծոյ սուրբ տաճարի մէջ բազմաթիւ վկաների առաջ, հրապարակօրէն նա ուխատել էր հաւատարիմ մնալու իր կնոջը մինչև մահու գերեզման և միայն և եթէ այդ սրբազան ուխտն անբիծ պահպանելու մէջ է կայանում իսկական ամուսնութեան բարոյական ամենաթաղցր երջանկութիւնը։ Նա այդ բոլորը հասկանում էր.—և ինչ մեծ սրխտ, չանցանք կը լինէր նրա կողմից, որ իր այդ սուրբ երջանկութիւնն իր կամքով մի կողմ հրէր և անձնա-

---

*) Տես № 199.

տուր լինէր ամենասոսկալի թշուառութեանն... Ո՛չ, ոչ, ամուսնական հաւատարմութիւնը քաղցրագոյն է։ Ոչինչ այնքան զովելի, ոչինչ այնքան սրբանուէր կարող չէ լինել, որքան այդ հաւատարմութեան համար անհնացած բարոյական պարտաւորեցուցիչ պատիւրագմբ։

Հարութեանը իր ամուսնական հաւատարմութիւնը պահպանելու համար գտնում էր և՛ մի ուրիշ տեսակէտից։ —Ինչ կանէր նա, եթէ իրեն սիրելի, պաշտելի կինն իրեն դաւաճանէր, սիրային չարաբերութիւն ունենար մի ուրիշ մարդու հետ։ Նա պէտք է նայի իր պաշտելի կնոջը, որ մի ժամանակ նրան տրեչտակ էր թուում, նա պէտք է գրկի նրան, համբուրի նրան, մի բոպէ միայն կարծելով, որ գրկում, համբուրում է միևնոյն հրեշտակին, բայց չանկարծ ամենատարբ գիտակցութիւնն իր սոսկալի չանթը պէտք է ցցի նրա ուղեղի և սրտի մէջ,—և նա սարսափով դէն պէտք է հրէ նրան իր գրկից՝ նրան թունաւոր օձ կարծելով։—Ա՛յ, տանջանքը սոսկալի է։ Բայց գիտենալով, տեսնելով, որ իր կինը սիրում է, պաշտում է իրեն,—և չանկարծ ինքը դաւաճանի նրան, սիրային չարաբերութիւն ունենար մի ուրիշ կնոջ հետ։ Նա պէտք է նայի իր պաշտելի կնոջը, որ մի ժամանակ նրան հրեշտակ էր թուում, նա պէտք է գրկի նրան, համբուրի նրան, մի բոպէ միայն կարծելով, որ գրկում, համբուրում է միևնոյն հրեշտակին, բայց չանկարծ ամենատարբ գիտակցութիւնն իր սոսկալի տանջանքը չպէտք է պար և նա։ Եթէ նա կարող էր պահանջել իր

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ—Խմբագիր-հրատարակիչ Ա. Օ-

—

Ամեն անգամ, երբ ես ուզում եմ ինչ-որ բան գրել, ինձ միշտ թվում է, թե ոչ ոք չի կարդա այն, ինչ ես գրելու եմ, որովհետև ամեն մարդ գիտի այդ բանը, որ ես գրելու եմ։ Ես ինքս էլ գիտեմ, որ ոչ ոք չի կարդա, ինչ որ ես գրելու եմ, որովհետև ես ինքս էլ գիտեմ, թե ինչ եմ ես գրելու

նաղքատ մասը՝ — հայագիտութիւնն բաժինը։ Անչուշտ մասամբ այս ազգասիրութիւնն է պատճառը, որ մեզանում հալածենագիտութիւնը ոչ միայն քիչ ծաւալ ունի հասարակաց խաւերի մէջ, այլ և մեր մամուլի գործիչների չրջանում։ Այս դրութիւնը ան՝ առիթաճ նսիրապարծուիլ է մեր մէջ, որ Արարատի լարգելի խմբագրութիւնն անդամ զարմանում է, նթէ մի աչխարհական անձն մամուլի հրապարակը դուրս գալիս՝ ցոյց է տալիս, թէ քիչ չատ հայ ազգի կեանքից տեղեկութիւն ունի և քիչ թէ չատ գրականական վիչտութիւն...

Սակայն մինչ հարկաւոր է բացատրել վաղուց լսուածած ան՝ ճչմարտութիւնը, թէ ներկան լաւ հասկանալու և ապագան խմաստութեամբ տնօրինելու համար՝ հայրենագիտութիւնը մեծ նչանակութիւն ունի։

Այս հանգամանքը աչքի առաջ ունենալով, մենք սրտանց ողջունում ենք Սահակ-Մեսրոպեան մրցանակի գաղափարը, որպէս մի զօրաւոր միջոց, որ կարող է ազատեան զարթեցնել գրականական ոժիր, ուղղել նրանց աչխատութիւնը որոչ ճանապարհով և ճոխացնել մեր գրականութիւնը այնպիսի ընտիր երկերով, որոնք կարող են հայագիտութեան ուսումը ծաւալել հասարակութեան մէջ։

Յաստ ենք, որ մեր ընթերցողին ծանօթ է Սահակ-Մեսրոպեան մրցանակի ծագումը։ Արդէն մեր բանասէրների չրջանում լսելի էր, որ բարելիչատակ հանգուցեալ Յ. Իզմիրեանցը՝ տակաւին իր կենդանութեան ժամանակ, ազգային գրականութեան զարկ տալու մտքով, հնուց մարդիկների խորհուրդն հարցնելով՝ երկու տարին մի անգամ վարձատրում էր ազգի մէջ երեան եկած երկասիրութիւններն, որոնք գիտական գրականական արժէք ունէին, և վերաբերում էին հայագիտութեան։ Ապագն 1877 թ. 500 ր. մրցանակ տուողս հանգուցեալ Բաստամեանց Վահան գիտական վարդապետը՝ Գօշ Մխիթարի գատաստանագրքի իրաւաբանական հետազօտութեան համար։ 1879 թ. մրցանակի արժանի աչխատութիւն չգտնուելով՝ ապագրուեցաւ Մովսէս Խորենացու պատմութիւնը և մասամբ օգնութիւն տրուեցաւ Ագաթանգեղոսի հրատարակութեան համար՝ չօգուտ Թիֆլիսի հայերէն դպրոցի տպագրութեան ընկերութեան։

1881 թուականին՝ առաջարկած գիտնականութիւններից մրցանակ տուողս Հ. Ղևոնդ Ալիշանի «Շիրակն» և Ն. Բարէր Բիւզանդացու Հայկական Բառաքննութիւնն՝ առաջինը տուաւ 1000 ֆրանկ, երկրորդը՝ 500 ֆրանկ։

1883 թուականին վերայ հասաւ ուսումնասէր Մինկենասի մահը։ Այս մահը լի հարկ մի մեծ կորուստ էր մեր գրականութեան համար. բայց հասարակութիւնը իւր տրտմութեան մէջ չուտով իմացաւ, որ Յ. Իզմիրեանցների նման առաքինիների համար մահը անմահութիւն է եղել։ Բարելիչատակ հանգուցեալը տակաւին իւր կենդանութեան ժամանակ իմացել է այս անհրաժեչտութիւնը և որպէս զի իւր մահուանից չտուչ ևս կենդանի պահէ իւր անուան վիչտակը հայ գրականութեան մէջ և զօրաւոր լինի հայագիտութեան անդաստանը մչակող հեղինակներին՝ իւր անդարձ կտակով հրատարակել է տասնձին տասն հազար րուբլի, որպէս զի նրա տոկոսը՝ 600 րուբլին ամեն տարի մրցանակ նչանակի «Վասն լաւագոյն երկոց, մանաւանդ ի մասին պատմութեան հայոց և հայերէն լեզուի պիտութեան ընդ գլխաւոր վերակացութեամբ Պատրիարքարանի Հայոց Կոստանդնուպօլսոյ»։

Հետաքրքիր է մրցանակաբաչխման պայմանները. «Նիւթ երկոց, որք գրեսցին վասն ընդունելոյ զմրցանակն՝ նչանակեսցին, և երկասիրութիւնք առաջի արարիչք քննեսցին և վարձատրեսցին մրցանակօք՝ի Պատրիարքարանէս Հայոց Կոստանդնուպօլսոյ, ի ձեռն տասնձին չանձնաժողովոյ կամ պիտան կաճառի իրիք, զոր նայն ընտրեսցէ։ Յայտ վաղրի կամ և կարդէ կատարարն, զի Ա. մրցանակն տասնհնգի չափոն Ս. Սահակայ և Մեսրոպայ. Բ. զի նչանակեսցի և բաչխեսցի մրցանակն չատաց տոնի Ս. Սահակայ և Մեսրոպայ. Գ. զի նիւթ երկոցն լիցի տատեղական՝ի պատմութենէ Հայոց կամ՝ի հայերէն լեզուագիտութենէ. Դ. զի ծանուցանիցէ Պատրիարքարանն վասն երկոց առաջի արարելոց և վասն այնոցիկ, որք վարձատրեսցին՝ լօրագիրս Հայոց ծանուցանելոյ, յորում վաղրի և հրատարակեսցին, և Ե. զի մի չուչ կալցին աչխարհքն, չորս գրեալ չափ՝ չորս տասնհնգեակ տողի, և ամենայն տող՝ տասն վանկ։ Եւ ամենայն գրեալք ի մրցման դալցին» Բարելիչատակ հանգուցեալը այս կերպով առաջին անգամ մտցրել է մեր մէջ այն սկզբունքը, որ լուսաւոր ապագայի մէջ վաղուց ընդարձակ կիրառութիւն ունի, որպէս հասատատ միջոց գիտութեան-գրականութեան որոչ ճիղը լաւ ու հմնաւոր երկասիրութիւններով հարստացնելու։

Հանգուցեալս մահուան տարին էլ նրա նչանակած մրցանակի բաչխման ժամանակն էր. սակայն մրցանակի արժանի գրութիւն չներկայացուելով կատարի բաղձանքի համեմատ պիտի տալուչին «Աստղիկը» և «Ղևոնդ Երեցը», ինչպէս և տպուեցաւ, առաջինը՝ 1885 թ.- իսկ երկրորդը՝ այս տարի *)։

Բարելիչատակ կատարարի մահուանից չտուչ՝ այս տարի առաջին անգամն է, որ մրցանակաբաչխութեան հանդէսը կատարուել էր Պօլսում կտակի պայմաններով։ Այս մասին արդէն տեղեկութիւն հաղորդած է «Նոր-Դար»-ը։ Որովհետև այդ տեղեկութիւնը չատ հրանցի էր, և դուչ չատերի համար հետաքրքրական է՝ թէ ինչ առարկութեամբ վարձատրութեան արժանի գտատած են մրցանակ ստացած երկասիրութիւններն, այդ պատճառով ամենայն չենք համարում այս հանդէսի մի քանի մանրամասնութիւնները մեր Նչմարների մէջ արձանագրել։

(Կը չարունակուի)

*) Հանգուցեալս այս բաղձանքի մէջ չէ կարելի չնկատել Շահնազարեանց Կարապետ վարդապետի հրատարակած պատմագիրների վերատին հրատարակելու անհրաժեչտութեան գիտակցութիւնը։ «Նոր-Դար»-ի ընթերցողին ծանօթ պիտի լինի՝ թէ ինչ հարուստ ծանօթութիւններով ստած է Աստղիկը, և ինչ բնաիր ձեռագրից ընդօրինակած է Ծանօթութիւնների և մեկնութիւնների կողմից այդ հրատարակութիւնը վերջացնում է հպելուած Հ. Շահնազարեանի հրատարակած Օրբելեանի պատմութիւնը։ Օրբելեանը երկրորդ ապագրութիւն էլ ունի, որ պրօֆ. Ֆ. Պատկանեանը հրատարակած է Պետերբուրգում Գիտութեան Ակադեմիայի տատրութեամբ. բայց որպիսի տարբերութիւն Պետերբուրգի և Պարիզի հրատարակութիւնների մէջ։

Ղևոնդ Երեց պատմագրի նոր հրատարակութիւնը տակաւին չենք տատեղական չարագրութիւնքն, այլ ամենքին տպաս ի մրցումն գալցին»։ Բարելիչատակ հանգուցեալը այս կերպով առաջին անգամ մտցրել է մեր մէջ այն սկզբունքը, որ լուսաւոր ապագրի մէջ վաղուց ընդարձակ կիրառութիւն ունի, որպէս հասատատ միջոց գիտութեան-գրականութեան որոչ ճիղը լաւ ու հմնաւոր երկասիրութիւններով հարստացնելու։

Հանգուցեալս մահուան տարին էլ նրա նչանակած մրցանակի բաչխման ժամանակն էր. սակայն մրցանակի արժանի գրութիւն չներկայացուելով կատարի բաղձանքի համեմատ պիտի տալուչին «Աստղիկը» և «Ղևոնդ Երեցը», ինչպէս և տպուեցաւ, առաջինը՝ 1885 թ.- իսկ երկրորդը՝ այս տարի *)։

Բարելիչատակ կատարարի մահուանից չտուչ՝ այս տարի առաջին անգամն է, որ մրցանակաբաչխութեան հանդէսը կատարուել էր Պօլսում կտակի պայմաններով։ Այս մասին արդէն տեղեկութիւն հաղորդած է «Նոր-Դար»-ը։ Որովհետև այդ տեղեկութիւնը չատ հրանցի էր, և դուչ չատերի համար հետաքրքրական է՝ թէ ինչ առարկութեամբ վարձատրութեան արժանի գտատած են մրցանակ ստացած երկասիրութիւններն, այդ պատճառով ամենայն չենք համարում այս հանդէսի մի քանի մանրամասնութիւնները մեր Նչմարների մէջ արձանագրել։

(Կը չարունակուի)

*) Հանգուցեալս այս բաղձանքի մէջ չէ կարելի չնկատել Շահնազարեանց Կարապետ վարդապետի հրատարակած պատմագիրների վերատին հրատարակելու անհրաժեչտութեան գիտակցութիւնը։ «Նոր-Դար»-ի ընթերցողին ծանօթ պիտի լինի՝ թէ ինչ հարուստ ծանօթութիւններով ստած է Աստղիկը, և ինչ բնաիր ձեռագրից ընդօրինակած է Ծանօթութիւնների և մեկնութիւնների կողմից այդ հրատարակութիւնը վերջացնում է հպելուած Հ. Շահնազարեանի հրատարակած Օրբելեանի պատմութիւնը։ Օրբելեանը երկրորդ ապագրութիւն էլ ունի, որ պրօֆ. Ֆ. Պատկանեանը հրատարակած է Պետերբուրգում Գիտութեան Ակադեմիայի տատրութեամբ. բայց որպիսի տարբերութիւն Պետերբուրգի և Պարիզի հրատարակութիւնների մէջ։

Ղևոնդ Երեց պատմագրի նոր հրատարակութիւնը տակաւին չենք տատեղական

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԻԱ.—Պարիզի անվտանգութեան զօրացրել են գատաւորներից բերած դիմումները վերաբերեալ գանգերով։

—Սոցիալիստներն որոչել են պահանջել, որ Դրէվիին հրաժարական տալ և Ֆրանսիայի կառավարութիւնը չանճնի հատարակչին տպահովութեան կոմիսարին։

ԳԵՐՄԱՆԻԱ.—Պրօֆեսսոր Վիրխովը վերլուծելով գերմանական թագաժառանգի կոկորդից արատախտած հիւթը, չոչնչէն վանդակներ չէ գտել նրա մէջ։ Անհրաժեչտ է սակայն նկատել, որ քննութեան համար ուղարկուած հիւթն արդէն փոփոխութեան է ենթարկուած եղել։

—Բերլինում տեղի ունեցող երկու կայսրների տեսակցութիւնն ընդհանուր խոտակցութեան առարկայ է ամեն տեղ էլ։ «Neue Freie Presse»-ը քաղաքական մեծ նչանակութիւն է տալիս այդ տեսակցութեան։ Լրագիրը լսուն ունի, որ Գերմանիայի, Աւստրիայի և Իտալիայի հատարակական գաչնակցութիւնը կը պահպանէ բոլոր իւր ոժիր։

—Կայսրների տեսակցութեան առթիւ, Բրիտանիայում հրատարակուող «Nord» թերթը, ատում է, որ Թագաւոր Կայսրի արած Բերլինի այցելութիւնը տեղի ունեցաւ Բալտիկ ծովի վերայ նատանգստութեան ընդհատման պատճառով։ Որովհետև այդ պատճառով անխուսափելի դարձաւ գերմանական հողից անցնելը, ատում և վճռուեց կանգ առնել Բերլինում։ Քաղաքավարութեան այս բնական այցելութիւնը, գերմանական կայսերական տան պատահած

դէպ, որ նրա վերայ մեր ընթերցողին մի մանրամասնական ծանօթութիւն տալինք։

Շատ ցաւելու ենք, նթէ բարելիչատակ Իզմիրեանցի բաղձանք՝ Շահնազարեանց Կարապետ վարդապետի հրատարակած պատմագիրները կրկին հրատարակելու ձեռնարկութիւնը անկատար մնայ։ Այդ մատենագիրների պատանչը անչուշտ մեծ է. այն ինչ այսօր առաջին հրատարակութիւնը բոլորովին սպատած է և մատենագիտական հնութիւն է համարվում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Մի քանի օր առաջ հետաքրքրը ամբողջ աչխարհին հաղորդեց, որ Ալեչինդոնի բարձրագոչ դատաւոր Ուօյտը դժուարին ձևերնով է ստացել պատուով և կարծում էին, թէ դա ոչնչականների

վերայ, մի վայրկեան միայն ուղղակի և սուր կերպով նայեց նրա աչքերի մէջ։—Բայց ինչ էիք խօսում իմ մասին... իչխանուհի...

—Մենք խօսում էինք ձեր գլխացաւի մասին, իչխանուհի,—չտապեց պատասխանել պարոն Հարուենեանը։—Նուենէն չատ սիրել էր ձեր մասին, որ այդպէս տանջվում էք գլխացաւից և հարցնում էր, թէ մինչ գլխացաւն այդպէս երկար կարող է տեւել. իսկ ես հաւատացնում էի, որ ձեր գլխացաւը հասարակ գլխացաւերից չէ, այլ բոլորովին տրիչ գլխացաւ...

Իչխանուհուն թուաց, որ իւր այդ խօսքերով նա ծաղրում է իրեն, հետևարար նա հասկացել է, թէ ինչ է իսկապէս նրա կեղծ գլխացաւը։ Կատարեալ Հնդկաստանը նորից բորբոքեցաւ նրա սրտի մէջ, բայց նա անգօր էր և բացականացաւ միայն իւր վարդագոյն չրթունքները կրծելով, ընդ նմին աչխատելով այդ կատաղութիւնն ուրիչոչ մի բանով երեան չհանելու, մանաւանդ, որ նա զգում էր, թէ ինչպէս պարոն Հարուենեանի աչքերը հետամուտ էին լինելու նրա դէմքի արտայայտութեանը։

—Բայց այժմ ինչպէս էք զգում ձեզ, իչխանուհի,—հարցրեց պարոն Հարուենեանը։

—Մի փոքր լաւ....

—Ուրեմն անցնում է գլխացաւը։

—Այո...

—Փառք Աստուծոյ, որ դուք այլ ևս այնպէս չէք տանջուիլ... Նուենէն գտնում էր, որ այդ չոկերից է և ես հաւանութիւն էլ տալիս. իսկ այժմ պարզ երեւում է, որ այդ իսկապէս այդպէս է եղել, որովհետև, ահա, երկու օր չկայ ընդամենն, ինչ դուք չնորհ էք բերել ամբանոց և գլխացաւն արդէն սկսում է անցնել... Ի դուր դուք այսքան ժամանակ քաղաքում մնացիք. եթէ դուք վաղ հետանայիք քաղաքից, գուցէ բոլորովին էլ գլխացաւ չտատնայիք...

Թիֆլիսն առհասարակ սարսափելի չոգեր գիտէ և այդ չոկերը պիտի ազդէին մանատանդ ձեզ վերայ, որովհետև դուք սովորած էք հիւսիսի սառ կլիմային։

Իչխանուհու կատաղութիւնը կրկնապատկուեցաւ. կարծես, մի սուսկալի կրակ բորբոքում էր նրա մէջ և ալրում, կիզում էր նրա ամբողջ ներսը։

—Այո, այդ մարդը, այդ անգութ մարդն ամեն բան հասկանում է և ուզղակի ծաղրում է նրան, փորձում է նրան ամենատսկալի կերպով և մի մազաչափ անգամ չէ խղճում նրան... մինչև անգամ նրա ժպիտի մէջ երեում է բացարձակ հեգնութիւն... Նա զգաց, որ եթէ մի փոքր էլ մնայու լինի նրանց մօտ, այլ ևս անկարող կը լինի իրեն զսպել և մի առանձին բան կանէ, որով կարող է իրեն բոլորովին մատնել, ուստի, առանց այլևայլութեան, պատճառ բերելով դարձեալ գլխացաւը, նա սեղմեց նրանց ձեռքն և հեռացաւ։

Նրա հետանալուց վերայ սիկին Հարուենեանի լեզուն, կարծես, կապուեցաւ։ Այնուհետև մինչև տուն գնալը նա ոչ մի բառ չատաց ամուսնուն։ Պարոն Հարուենեանը նոյնպէս լուռ մնաց։

Նրանք գնացին տուն։ Մի քանի րոպէից վերայ նկատ ևս՝ Արմենակը որսորդական հագուստով և հրացանն ուսին։

—Արի՛ս վերայ, իչխանուհին եկել է ամարանոց,—գոռաց նա ներս մանչլով եղբօր և տարի մօտ։—Այնա եմ ատում։

—Այո, եկել է,—պատասխանեց եղբայրը.—դու տեսար նրան։

—Ոչ։

—Հապա ինչպէս գիտես, որ արևով էլ երգվում ես։

—Ինչպէս,—կանչեց ծիծաղելով Արմենակը։—Ի՞նչպէս են իմանում մի երկրում գարուն եկել է, թէ ոչ։—Երբ տեսնում են ծիծեռնակը թռչում է գալիս այն երկիրը...

—Ոչինչ չենք հասկանում քո ատածներից։

—Այսօր Պետրոս-ծիծեռնակին տեսայ դէպի ամարանոց թռչելիս,—կանչեց աւելի բարձրաձայն ծիծաղելով Արմենակը։—Ուրեմն իչխանուհի-գարունն այստեղ է...

(Կը չարունակուի)

Ն ա ր - Դ ա ս

գործն է։ Բայց այժմ Նիւ-Եօրկի երկու լրագրական բէպօրտեր խոստովանեցան, որ երկուք են ուղարկել դատաւորին այդ փաթեթը, որի մէջն է եղել փայտի փշրանքներ՝ թանաքով կեղտոտած. այս արել են, որպէս զի նորութիւն ունենան հաղորդելու։

*** Պօղնոում սկսուել է սօցիալիստների դատը, որոնց մասին գրած մեղադրական ճառը բռնում է 441 տպուած երես։

*** Բուէնօս Այրէսի քաղաքային վարչութիւնը որոշել է Արգէնտինեան հասարակապետութեան 100-ամեակին մի արձան կանգնեցնելու համար տալ 250,000 ֆրանկ։ Արձանը պէտք է սիւնի ձև ունենայ և ձուլուի բրօնզից։

* * *

Գերմանական թագաժառանգի կոկորդացաւը.—Գերմանական թագաժառանգը Մադրիդ եղած մէջոցին, սպանական հանգուցեալ Ալֆոնս XII թագաւորն ի պատիւ իւր բարձր հիւրին կազմեց պարեկոյթ։ Մարքիզուհի դը Խաէրէն, այն ժամանակ դեռ օրիորդ, գերմանական թագաժառանգին հրաւիրեց իւր հետ պարելու։ «Եթէ իմ պապ լինելս չարգիլէր ձեր գրաւիչ առաջարկութիւնն ընդունելու, պատասխանեց պրինցը, ուրիշ հանգամանքներ բոլորովին արգելք կլինէին դրան։ Այսինքն, ես այնքան քնքուշ եմ՝ ինչպէս որ և է մի պրիմադոնն և երբ խիստ զգացվում եմ, իսկոյն սկսում է կոկորդս ցաւել։ Ա՛յ, ես երբէք կարող չեմ այնպէս հնչական ձայնով հրամայել զօրքերին, ինչպէս որ այդ անում է իմ մեծապատիւ հայրս։ Զայնս հրաժարվում է ինձ հնազանդելու հենց այն մէջոցին, երբ նա ամենից աւելի հարկաւոր է ինձ։ Պարերի մէջոցին ես մինչև անգամ չեմ էլ կարող չընդալ ձեր ականջին, թէ ինչքան դիւթական զեղեցիկ էք դուք»։

* * *

*** Մինչև այժմ միշտ անակղղ էին եղել Աֆրիկայի ամենաարագր սարի՝ Կիլիմանջարօի գագաթը բարձրանալու փորձը։ Վերջապէս անցեալ օգոստոսին Լայպցիգի գիտուր Մայէրին յաջողուել է բարձրանալ, որի համար գործ է դրել նա 6 օր։

*** Մադրիդը ապրուելիան մէջ է. Սպանիայի ամենանշանաւոր ցուլամարտ Ֆրասկուէլօն մերձ է մահ հիւանդ է.—ցուլամարտի մէջոցին նրա փորին հզօրապէս վիրաւորել է կատաղ եզը՝ որին նա վեսոլ սպանել է։ Այդ լուրերի ահագին բազմութիւն խռնվում է նրա տան առաջ, որոնց մէջ ևս սպանական մեծամեծները, պատգամաւորները և ներակոյաց անդամներ։ 800-ից աւելի հեռագիրներ է ստացել հիւանդը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԽԱՐԿՈՎ, 19 Նոյեմբերի։.—Բոլոր գործնների 13-րդ ժողովը պիտի գումարուի գալ տարի Բօստովում՝ Դօնի վերայ։

ՊԱՐԻԶ.— Նահանգները Դրէվիի կողմն, իսկ Ֆէրրիի գէմ են յայտնում իրենց։

Պարիզեան գրաֆը օրէնսնախանշներին խորհրդակցութեան հրաւիրեց։ Շարտի հերցոգը Եգիպտոսից չտապում է վերադառնալ Լօնդօն, ուր որ արդէն հասել է Օմալեան հերցոգը։

Խմբագիր-հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԵՐԹԵՒԵԿՆԵՐԻ

ԲԺՇԿԱՊԵՏ ՔՈՒՉԱՐԵԱՆՑԻ

(Երևանէն հրապարակում Ծխոմ-Ղազովի տունը.)

Ընդունելութիւնը ամեն օր.

Աւուրջեան 9—10 ժամին Ա. Բախտաւոյ—կանանց և երեխաների հիւանդութիւնների։ 10—12 ժամին Կ. Բախտաւոյ—Ներքին ջղային հիւանդութիւնների և էլէքտրական բժշկութիւնն

12—1 ժամին Գ. Բուչարեանց—Արտաքին, վիրաբուժական, աչքի և վիներական (ծածուկ) հիւանդութիւնների։

Երեկոյեներ 6—8 ժամը, իսկ չորեքշաբթի և շաբաթ երեկոեան ժամերին կոկորդի և ականջի հիւանդութիւնների։

Ամենայն օր քննում են ծծմայրենի և ծաւռանների առողջութիւնները և ծաղիկ են կարում։

Վարձ խորհրդի համար առաւօտեան 40 կ., իսկ երեկոեան 60 կոպէկ։

Հիւանդները անվարձ։

Հիւանդապետ բժիշկ Գ. ԲՈՒՉԱՐԵԱՆՑ.

X—102

№ 1.

ԻՍԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱՅՍ ԴՐՕՇՄՈՎ ՄԻԱՅՆ

Huste-Nicht

Gerichtl. geschützt

ՄԻ ՀԱՋԻՐ

Մեղրա-Բաւսեղէն-Մալց-Էքստրակտ և չաքարեղէններ։

Լ. Գ. ՊԻՇՏ ԵՒ ԸՆԿ. ԲՐՅՈՒԼՈՒՄ

Գինն է,—մի հիւր 1 ր. 25 կ. և 2 ր. 40 կ. չաքարեղէնները 30 և 50 կոպէկ։

Գլխաւոր պահեստն է Թուսխարի համար՝ Պետերբուրգ, վ. Ապրիլի մօտ, Բոլշ. Մօրսկայա, № 17.

Վաճառվում է.—Թիֆլիսում, գեղատնային ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութիւն, վ. Գրիվնակ։

Ճանապարհածախսը առանձին։

(Մ. 4844) 8—1

ԲԺԻՇԿ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԻՍԱՀԱԿԵԱՆՑԸ

Ընդունում է հիւանդներին առաւօտեան ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան՝ 4-ից մինչև 5-ը։

Բնակվում է Սասրի-Արաբեանցների փողոցի վերայ, տուն Բակրադէի № 20.

X—32

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐ ՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱՓՈՂԱՅԻՆԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր երթևեկութիւն Մարսէյլի և Բաթումի մէջ։

Շորեքշաբթի, նոյեմբերի 25-ին, «ԱՆԱՏՕԼԻԱ» (Anatolie) շոգենաւը, նաւապետ «ԲՕՇԵԼ» (Boschel) դուրս կը գայ Բաթումից դէպի Տրապիզօն, Օրդու, Սամսօն, Կ. Պօլիս և Մարսէյլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալութեան Բաթումում՝ պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ԲԷՆՕԻՆ, նախկին գաղեբէյա Արծրունիների № 103. 4—4

ПОДПИСКА

НА 1888 ГОДЪ

НА БОЛЬШУЮ ЕЖЕДНЕВНУЮ ПОЛИТИЧЕСКУЮ, ОБЩЕСТВЕННУЮ И ЛИТЕРАТУРНУЮ ГАЗЕТУ

„РУССКІЙ КУРЬЕРЪ“.

Годъ девятый.

Русскій Курьеръ выходитъ ежедневно въ форматѣ большихъ газетъ

Условія подписки:

Съ доставкою въ Москвѣ:		Съ перес. во всѣ города:		Заграницу:	
На годъ	9 р. — к.	На годъ	10 р. — к.	На годъ	20 р. — к.
» 6 мѣс	5 » — »	» 6 мѣс.	6 » — »	» 6 мѣс.	12 » — »
» 3 »	2 » 75 »	» 3 »	3 » — »	» 3 »	6 » — »
» 1 »	1 » 10 »	» 1 »	1 » 25 »	» 1 »	2 » 50 »

1. Отдѣльные №№ изъ конторы изданія и у разносчиковъ—по 5 коп.
2. Подписка принимается съ 1-го по 1-е каждаго мѣсяца и не далѣе конца года.
3. Гг. иногородные, при возобновленіи подписки, благоволятъ прилагать свой печатный адресъ.
4. За перемѣну адреса городскаго и иногороднаго—30 коп. При перемѣнѣ городскаго на иногородный доплачивается разница въ цѣнѣ подписки.

Тарифъ на объявленія:

За строку петита или за мѣсто, занимаемое ею:

На ПЕРВОЙ стран. **20** коп. за стр. На ЧЕТВЕРТОЙ стран. **10** коп. за стр.

1. За украшенія объявленій взимается прибавка 10% съ суммы стоимости объявленій.
2. Доставляющимъ значительное количество объявленій дѣлается уступка.
3. Лицамъ ищущимъ мѣстъ или занятій, Контора «Русск. Кур.» печатаетъ объявленія со скидкою 30%, а предлагающимъ давать уроки 50% противъ тарифа.
4. За приложеніе объявленій вѣсомъ не болѣе одного лота взимается по ½ коп. съ экземпляра, вѣсомъ въ 2 лота—по ¾ коп., въ 3 лота—по 1 коп., въ 4 лота—1¼ коп., въ 5 лотъ—по 1½ коп. и т. д.; за объявленія большаго размѣра за складку взимается отдѣльная плата **по 1 руб. съ 1,000 экземпляровъ.**
5. Объявленія библіографическія, рекламы, объ уничтоженіи довѣренностей, о потеряхъ, объ умершихъ, о желаніи давать уроки, о медицинскихъ средствахъ и т. п., принимаются не иначе какъ съ засвидѣтельствованіемъ подлежащаго начальства.

Контора изданія открыта по будиямъ отъ 9 до 5 ч., а по праздникамъ отъ 10 до 2 ч., **редакція-же** отъ 1 до 3 ч.

Редакторъ-Издатель **Н. П. ЛАНИНЪ.**

3—1

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ

„ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՉԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՑԱԾ

ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍՆԵՐՈՒՄ

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

Կարևոր ընկերներ տան տիկինների և ազնիւ օգնականներ բոլոր արհեստաւորների համար

ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում. Չինգերի ընկերութեան կեդրոնական պահեստում, Գօլօվինսկի պրօսպեկտի վերայ, Միքիմանովի տան և նրա բաժանմունքների մէջ։

Բաքւում. Միքայէլեան փողոցում, Միրզա Ադազեանի տ. | Բաթումում. Պօլիցիական փողոցում, Թէրզի օղու տ.

Քութայիսում. Բուլվարի դէմ, Չերեկովի տ. | Թեհրանում. Մարշ-Մէյդանի դէմ, բուլվարի վերայ։



Աջ և ձախ ճանապարհորդող գործակալների մօտ

ՄԻՋԻՆ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԵՒՐՈՊԱՑԻ ՀԱՄԱՐ ՉԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿ. ԳԼԽԱՒՈՐ ԴՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ

Գ. ՆԷՅԴԼԻՆԳԵՐ

ՉԻՆԳԵՐԻ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԻՍԿԱԿԱՆ ԱՐՅՕՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԵՏԵՒԵԱԼ ԵՆ

1) Մեքենաներն ունին ընդարձակ գործարան և համաշխարհային հռչակ։ 2) Դները ամենէժանագներն են և միայն Չինգերի ընկերութեան մէջ։ 3) Ամեն տարի ծախվում է մօտ 700,000 հատ։ 4) Մեքենայի յատկութեանը չէ կարողացել նմանեցնել ոչ մի կարեմեքենայի գործարան։ 5) Թէ մեքենաները և թէ նրանց օգնական գործիքները սիշտ լաւանում և կատարելագործվում են։ 6) Կարելի է ընտրել ամենամեծ քանակութեամբ և ամեն տեսակ ընտանեկան, արհեստաւորների համար մեքենաներ նաև մասնագիտական մեքենաներ զինուորական հագուստներ կարելու համար։ 7) Այս հռչակաւոր մեքենաները ամեն մարդ հեշտութեամբ կարող է ձեռք բերել։ Գնողները կարող են, եթէ կամենում են դրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, այն է շաբաթով, կամ ամսով և կամ ժամանակամիջոց սահման գրաւականով դրամը վճարելու համար։ 8) Մեքենայի վերայ կատարելագործ և հիմնաւոր սովորելը ձրի է հմուտ վարպետաւորների համար։

Յ. Գ. Չինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնվում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են ասեղներ, թել, մետաքս և այլ մեքենային պատկանելի իրեղէններ ամենաչափաւոր գներով։

60—52

Дозволено цензурою Тифлисъ 19-го Ноября 1887 г. Տպարան Մ. Գ. Թօխինեանց Типографія М. Д. Ротиніанцъ Гол. пр. д. № 50.